Զեկույց

ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի բարձրագույն կրթության և ոչ ֆորմալ, ինֆորմալ կրթության ոլորտների վերաբերող դրույթների կիրարկման շուրջ

Հեղինակ՝ Սերոբ Խաչատրյան

Երևան 2025

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության պատասխանատվությունը կրում է բացառապես հեղինակը՝ Սերոբ Խաչատրյանը, եւ պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Բովանդակություն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 5
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 8
ԳԼՈՒԽ 1. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 9
ԳԼՈՒԽ 2. ՈՉ ՖՈՐՄԱԼ ՈՎ ԻՆՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 29
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 33
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 36
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 37

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՑ՝ Ակադեմիական ազատության ցուցիչ

ԲՈՒՀ՝ Բարձրագույն ուսումնական հաստատություններ

ԵԲԿՏ՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածք

ԵՄ՝ Եվրոպական միություն

ՈԱԾ՝ Որակավորումների ազգային շրջանակ

ՀԸԳՀ՝ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր

ԿԳՄՄՆ՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՄԲԵՈՒԵ՝ Միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներ

ՏԶՀԿ՝ Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպություն

STEM՝ Գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն, մաթեմատիկա

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի կրթական համակարգը շրջադարձային փուլում է՝ փորձելով գտնել հավասարակշռություն համաշխարհային ինտեգրման ձգտումների և համակարգային շարունակական մարտահրավերների միջև: Սույն զեկույցը գնահատում է «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» (ՀԸԳՀ) և դրա ճանապարհային քարտեզի իրագործումը՝ մասնավորապես կենտրոնանալով 93-րդ և 94-րդ հոդվածների վրա, որոնք վերաբերում են բարձրագույն կրթությանը և ոչ ֆորմալ, ինֆորմալ կրթությանը : Հիմնվելով «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի», Վիճակագրության պետական կոմիտեի, միջազգային ցուցանիշների ու շահակիր կողմերի հետ իրականացված հարցազրույցների վրա, սույն վերլուծությունը ներկայացնում է Հայաստանի կրթական համակարգի առաջընթացը և բացերը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին (ԵԲԿՏ) և ցկյանս ուսումառության շրջանակին համապատասխանելու գործընթացում:

Բարձրագույն կրթությունը բախվում է թերֆինանսավորման, օրենսդրական կարգավորումների ձգձգման և ակադեմիական ազատության հետընթացի խնդիրներին, իսկ ոչ ֆորմալ, ինֆորմալ կրթության ոլորտում առկա են ֆրագմենտար մոտեցումներ և դանդաղընթացք: Ժողովրդագրական տեղաշարժերը, արտագաղթը և կրթության արդյունքների ու աշխատաշուկայի կարիքների միջև անհամապատասխանությունները էլ ավելի են բարդացնում բարեփոխումները: Այս զեկույցը ընդգծում է այս մարտահրավերներին դիմակայելու հրատապությունը՝ նպատակ ունենալով բարձրացնել Հայաստանի գլոբալ մրցունակությունը, սոցիալական արդարությունը և տնտեսական դիմակայունությունը:

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Հայաստանի կրթական բարեփոխումները, որոնք հիմնվում են ՀԸԳՀ-ի, «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» վրա, արձանագրում են առաջընթացի ոչ միանշանակ պատկեր: Թեև այնպիսի կառուցվածքային ծրագրեր, ինչպիսիք են «Ակադեմիական քաղաք» նախաձեռնությունը և որակավորումների ազգային շրջանակը նպատակ ունեն բեկում մտցնել համակարգում, սակայն համակարգային խոչընդոտները, լրջագույն խնդիր են երկարաժամկետ զարգացման համար:

Բարձրագույն կրթության վերաբերյալ հիմնական եզրահանգումները:

1. **Պարբերականթերֆինանսավորում**. Հայաստանը զբաղեցնում է 100-րդ տեղը համաշխարհային բարձրագույն կրթության ֆինանսավորման ցուցանիշով: Հայաստանի ուսանողների 83.8%-ը սովորում է վճարովի համակարգում: Բարձրագույն կրթությանը հատկացվում է կրթության բյուջեի ընդամենը 7-8%-ը, ինչը խոչընդոտում է որակի և հասանելիության բարձրացմանը:
2. **Օրենսդրական նախաձեռնությունների ուշացումներ**.«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի ընդունման ուշացումը խանգարում է կառավարման բարեփոխումներին և ԵԲԿՏ-ի հետ ինտեգրմանը: Որակավորման ազգային շրջանակի ինքնահավաստագրման զեկույցի հետաձգումը մինչև 2030 թվականը սպառնում է Հայաստանին դուրս մնալ ԵՄ կրթական նախաձեռնություններին լիարժեք ինտեգրվելուն:
3. **Ակադեմիական ազատության նվազում**. Ակադեմիական ազատության ինդեքսը վերջին տարիներին նվազել է: 2019 թվականին այն եղել է 0.84 (հնարավոր 1-ից), իսկ 2024-ին՝ 0.64, ինչը պայմանավորված է քաղաքականացված համալսարանական խորհուրդներով, հաստատությունների ինքնավարության սահմանափակումներով և այլ գործոններով:
4. **Հմտությունների անհամապատասխանություն.** Թեև ուսանողների 30%-ը սովորում է STEM մասնագիտություններով, շրջանավարտների զգալի մասը չունի տնտեսության համար պահանջվող հմտությունները: Հայաստանը շրջանավարտների հմտությունների համաշխարհային վարկանիշում զբաղեցնում է 129-րդ տեղը:
5. **Սոցիալական ներգրավվածության բացեր**: Հայաստանի աղքատ բնակչության ընդամենը 17.2%-ն է ստանում բարձրագույն կրթություն: Չնայած ազգային փոքրամասնությունների և հաշմանդամություն ունեցող ուսանողների աջակցության ուղղությամբ նկատվում է որոշ առաջընթաց, ներգրավվածության ցուցանիշները դեռևս մնում են բավականին համեստ:

Ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության մարտահրավերները.

1. **Քաղաքականության մասնատվածություն**. Տերմինների անհամապատասխանությունները (օրինակ՝ «ոչ ֆորմալ» կրթությունը շփոթում են

«արտադպրոցական» կրթության հետ) և ծրագրերի միջև ժամանակացույցերի անհամապատասխանությունը հաճախ խոչընդոտում են առաջընթացի արձանագրմանը:

2. **Կիրարկման ուշացումներ**. Այնպիսի կարևոր գործիքներ, ինչպիսիք են ազգային ուսուցման ռեեստրը և ճանաչման մեխանիզմները, դեռևս կյանքի չեն կոչվել, իսկ առանցքային նախաձեռնությունները հետաձգվել են մինչև 2026–2028 թվականները:
3. **Ցածր դիրք համաշխարհային վարկանիշում**. Հայաստանը ցկյանս ուսումնառության ոլորտում զբաղեցնում է 98-րդ տեղը ՝ արտացոլելով մեծահասակների կրթության և հմտությունների ճանաչման ոչ բավարար ենթակառուցվածքները:

Առաջարկություններ.

- **Բարձրագույն կրթություն**. արագացնել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի ընդունումը, բարձրացնել ոլորտի ֆինանսավորումը՝ մինչև 2026 թվականը այն հասցնելով կրթության բյուջեի 15%-ին, ստեղծել դասավանդման գերազանցության կենտրոններ, և օրենքով ամրապնդել ակադեմիական ազատությունը:
- **Ոչ ֆորմալ կրթություն**. Տերմինաբանությունը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին, մինչև 2026 թվականը գործարկել ազգային ուսուցման ռեեստրը, և հանրային իրազեկման արշավների միջոցով խթանել ցկյանս ուսումնառությունը:
- **Համակարգային համադրություն**. Համաժամանակեցնել ՀԸԳՀ-ի, կրթության զարգացման պետական ծրագրի և կառավարության 2021-2026թթ. ծրագրի ժամանակացույցերը, ինչպես նաև ազգային քաղաքականության ձևավորման շրջանակներում ներառել ԵԲԿՏ սկզբունքները (օրինակ՝ հանրային պատասխանատվությունը):

Եզրակացություն

Հայաստանի կրթական համակարգը պահանջում է հրատապ և համակարգված գործողություններ՝ թերֆինանսավորումը, օրենսդրական անգործությունը և սոցիալական անհավասարությունները հաղթահարելու համար: Կառավարման, ուսուցման որակի և ցկյանս ուսումնառության բարեփոխումների առաջնահերթությունը կուժեղացնի Հայաստանի մարդկային կապիտալը և կհամապատասխանի կրթական միջազգային օրակարգերին:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցի շրջանակներում դիտարկվել է ՀԸԳՀ-ի և 2021 թվականին ընդունված ճանապարհային քարտեզի իրագործումը՝ հատկապես կենտրոնանալով 93-րդ և 94-րդ հոդվածների վրա: Նշված նախաձեռնությունների վերլուծությունը իրականացվում է նաև «**ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի**», դրա գործողությունների ծրագրի, ինչպես նաև վերանայված գործողությունների նախագծի համատեքստում: Զեկույցի հավելված 1-ում ներկայացված են բոլոր միջոցառումների նպատակները, քայլերը, ժամանակացույցերը, ակնկալվող արդյունքները և իրականացման ընթացքը:

Վերլուծությունը հիմնված է նաև **Հայաստանի Հանրապետության սոցիալական իրավիճակի վերաբերյալ** տարեկան զեկույցների վրա, որոնք հրապարակվում են ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից: Այս զեկույցները պարունակում են կարևոր տվյալներ Հայաստանի ուսանողների, դասախոսական կազմի և օտարերկրյա ուսանողների քանակի վերաբերյալ՝ արտացոլելով բարձրագույն կրթության միտումները և փոփոխությունները հասկանալու վիճակագրական հիմքը:

Դիտարկվել են հետևյալ հինական ուղղությունները.

1. **Որակավորումների ազգային շրջանակ**
   - 2011 թվականին ընդունված և 2016 թվականին վերանայված ՈԱՇ-ը կարևոր նշանակություն ունի կրթական արդյունքները աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու գործում: Զեկույցի շրջանակներում անդրադարձ կկատարվի նաև 2022-2023 թվականների ընթացքում ընդունված որակավորումների **ոլորտայինշրջանակին**, որոնք արտացոլում են վերջին զարգացումները բարձրագույն կրթության համակարգում:
2. **Միջազգային զեկույցներ**

- Զեկույցում վերլուծել ենք միջազգայնորեն ճանաչված ցուցիչները և տվյալները, որոնք ներկայացնում են Հայաստանի բարձրագույն կրթության ներկայիս վիճակ ը: Նշված ցուցիչների ցանկում են.
  - **Տաղանդի համաշխարհային մրցունակության ինդեքսը (Global Talent Competitiveness Index),** որը գնահատում է տաղանդները զարգացնելու, ներգրավելու և պահելու Հայաստանի կարողությունները:
  - **Լեգատում բարեկեցության ինդեքսը (Legatum Prosperity Index)**, որը տրամադրում է Հայաստանի կրթական և սոցիալ-տնտեսական միջավայրի ընդհանրական պատկերը:
  - **V-DEM տվյալների բազան (V-DEM Dataset)**, որը ներկայացնում է մանրամասն ցուցանիշներ ակադեմիական ազատության և կրթության ոլորտում:

Բացի այդ, հաշվի է առնվել նաև «**Հայաստանի հանրային ֆինանսների ուսումնասիրության**» զեկույցը, որը մշակվել է Համաշխարհային բանկի Հայաստանի գրասենյակի կողմից 2024 թվականի դեկտեմբերին:

ԳԼՈՒԽ 1. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի բարձրագույն կրթության վիճակագրությունը

2023–2024 ուսումնական տարվա դրությամբ Հայաստանում գործում էր 53 բարձրագույն ուսումնական հաստատություն (ԲՈՒՀ) և 13 մասնաճյուղ: Դրանցից 23-ը պետական, իսկ 30-ը՝ մասնավոր ուսումնական հաստատություններ են: Մասնավոր ԲՈՒՀ-ներից միայն 8-ն են հավատարմագրված: Պետական ԲՈՒՀ-երի համար հավատարմագրումը պարտադիր է: Ուսումնական հաստատությունների 13 մասնաճյուղերից 12-ը պետական համալսարանների մասնաճյուղեր են: Ուսանողների թիվը 72,058, որից 59,586-ը (82.7%) սովորել է պետական ԲՈՒՀ-երում:

Բարձրագույն կրթության ոլորտի համար հատկապես մտահոգիչ է ֆինանսավորման խնդիրը: Ըստ Տաղանդի համաշխարհային մրցունակության ինդեքսի՝ 2023 թվականին

Հայաստանը բարձրագույն կրթության ֆինանսավորման առումով 134 երկրների շարքում զբաղեցրել է 100-րդ տեղը: Հայկական համալսարանների եկամուտների 80–95%-ը ձևավորվում է ուսանողների վարձավճարների հաշվին:

2023–2024 ուսումնական տարում պետական ԲՈՒՀ-երում ուսանողների միայն 16.2%-ն է սովորել պետական պատվերով, մինչդեռ 83.8%-ը սովորել է վճարովի համակարգում[1]: Բարձրագույն կրթությանը բաժին է հասնում կրթության պետական բյուջեի ընդամենը 7–8%-ը, ինչը զգալիորեն պակաս է հանրակրթությանը հատկացվող ծախսերից (66%):

Չնայած նրան, որ կապիտալ ծախսերը բարձրագույն կրթության համար պատմականորեն եղել են ցածր, վերջին շրջանում դրանք կառավարության տարբեր նախաձեռնությունների արդյունքում աճել են: Մասնավորապես, ընթացքի մեջ է «Ակադեմիական քաղաք» ծրագիրը, որը նախատեսում է համալսարանների և գիտահետազոտական ինստիտուտների միավորում կլաստերների մեջ:

2012-2022 թվականների ընթացքում բարձրագույն կրթության վրա մեկ ուսանողի հաշվով ծախսերը աճել են 48%-ով, հիմնականում ուսանողների թվի նվազման և պետական ծախսերի աճի պատճառով: Այնուամենայնիվ, հանրակրթության համեմատ, բարձրագույն կրթության համար նախատեսված ծախսերը մնում են 30%-ով ցածր, ինչի արդյունքում ՀՀ-ում բարձրագույն կրթությանը հատկացված ծախսերը համեմատած ԵՄ-ի և միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների հետ, զգալիորեն ցածր են:

Մեկ ուսանողի հաշվով ծախսերը ըստ կրթության մակարդակի (համեմատած հանրակրթության հետ) (2022թ.)[2]

Երկիր	Հարաբերակցություն (Բարձրագույն կրթություն և ընդհանուր կրթություն/ հանրակրթություն)

[1] Սոցիալական իրավիճակը Հայաստանում 2023 թվականին
2 Armenia Public Finance Review, International Bank for Reconstruction and Development/The World Bank p.

Հայաստան	0.70
Ալբանիա	0.76
Մոլդովա	0.84
Վրաստան	0.58
Էստոնիա	1.81
Միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներ	1.51
ԵՄ	1.36

Հայաստանի կառավարությունը բարձրագույն կրթության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով դիտարկում է արդյունքահեն ֆինանսավորման մեխանիզմների ներդրում: Սակայն բարձրագույն կրթության ոլորտում ուսանողների թիվը շարունակում է նվազել՝ պայմանավորված ժողովրդագրական փոփոխություններով, արտագաղթի բարձր մակարդակով և հավատարմագրման պահանջների խստացմամբ: 2009–2018 թվականների ընթացքում ԲՈՒՀ-երում ուսանողների քանակը նվազել է 31%-ով[3], ինչի արդյունքում հավատարմագրման պահանջներին չբվարարող 16 համալսարան փակվել է:

Չնայած վերջին 25 տարիների ընթացքում մարդկային կապիտալի զարգացման ոլորտում Հայաստանի գրանցած առաջընթացին, երկրի ներուժի լիարժեք իրագործման ճանապարհին դեռևս առկա է զգալի բաց: Ըստ Մարդկային կապիտալի ինդեքսի (Human Capital Index, HCI)[4] 2020 թվականի տվյալների, այսօր Հայաստանում ծնված երեխան, ամբողջական կրթություն և լիարժեք առողջություն ունենալու պայմաններում կհասնի հնարավոր արտադրողականության ընդամենը 58%-ին[5]: Այս ցուցանիշը զիջում է թե՛ Եվրոպական միության միջինին (73%), թե՛ միջինից բարձր

3 Սոցիալական իրավիճակը Հայաստանում 2019, 2018 թվականներին
4 The Human Capital iIndex 2020 https://documents1.worldbank.org/curated/en/456901600111156873/pdf/The-Human-Capital-Index-2020-Update-Human-Capital-in-the-Time-of-COVID-19.pdf
5 Համաշխարհային բանկի կողմից մշակված Մարդկային կապիտալի ինդեքսը (ՄԿԻ) չափում է երկրի տնտեսական արտադրողականության ներուժը՝ գնահատելով առողջապահության և կրթության արդյունքները, ինչպիսիք են

եկամուտ ունեցող երկրների միջինին (62%), և թե՛ Հայաստանի տարածաշրջանային հարևանների միջինին (61%)[6] :

Բարձրագույն կրթության արդյունավետությունը համաշխարհային վարկանիշներում

Բրիտանական Լեգատում հիմնադրամը ամեն տարի հրապարակում է Բարեկեցության ինդեքսը (Prosperity Index),[7] որտեղ ներառված է նաև Հայաստանը: 2023 թվականի ինդեքսի համաձայն՝ բարձրագույն կրթության հետ կապված բոլոր ցուցանիշները Հայաստանում անկում են ապրել: Եթե 2013 թվականին Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտը համաշխարհային մակարդակում զբաղեցնում էր 51-րդ տեղը, ապա 2023 թվականին այն նահանջել է մինչև 64-րդ հորիզոնականը:

Բարձրագույն կրթության ընդգրկվածության մակարդակը նույնպես նվազել է: Թեև շրջանավարտների թիվը հիմնականում պահպանվել է կայուն, սակայն այլ երկրներում արձանագրված առաջընթացի ֆոնին Հայաստանը այս ցուցանիշով ևս նահանջել է՝ 19-րդ տեղից իջնելով 28-րդ տեղ: Այդուհանդերձ, այս ցուցանիշի շրջանակում Հայաստանը դեռևս պահպանել է համեմատաբար բարձր դիրք:

2022 թվականին ԲՈՒՀ-երի ընդգրկվածության համախառն ցուցանիշը կազմել է 53.4%, ինչը ցածր է համադրելի երկրների միջին ցուցանիշից (60%): Ընդգրկվածության զուտ ցուցանիշը կազմել է ընդամենը 32%, ինչը մասամբ պայմանավորված է հնացած ուսումնական ծրագրերով, ոչ բավարար ենթակառուցվածքներով, ուսումնական միջավայրի խթանման պակասով և դասախոսական կազմի որակի խնդիրներով:[8]

երեխաների գոյատևման մակարդակը, ուսման սպասվող տարիները և ուսման հետ հարմարեցված կրթության որակը: Այն չափում է այսօր ծնված երեխայի ապագա եկամտի ներուժը՝ օգնելով քաղաքականության մշակողներին առաջնահերթություն տալով մարդկային զարգացման ոլորտիներդրումներին՝ աշխատուժի պատրաստվածության և երկարաժամկետ աճի բացերը լրացնելու համար:

6. Armenia Public Finance Review, International Bank for Reconstruction and Development/The World Bank

7 Legatum Prosperity Index-ը գնահատում է ազգային ցուցանիշները տնտեսական, սոցիալական և կառավարման չափանիշներով, ներառյալ կրթությունը, առողջապահությունը և ինստիտուցիոնալ որակը: Այն երկրներին տրամադրում է ամբողջական չափանիշ՝ առաջընթացը գնահատելու և ներառական բարգավաճումը խթանելու բարելավման ոլորտները բացահայտելու համար:

8 Armenia Public Finance Review, International Bank for Reconstruction and Development/The World Bank

Բացի այդ, ուսանողների մոտ երկու երրորդը կարծում է, որ Հայաստանի բարձրագույն կրթությունը իրենց չի տրամադրում այն գործնական հմտությունները, որոնք անհրաժեշտ են աշխատաշուկայում: Չնայած այն բանին, որ նոր ընդունված ուսանողների 30%-ը սովորում է STEM ոլորտներում, Հայաստանի բարձրագույն կրթությունը չի կարողանում ապահովել զարգացող ոլորտների կողմից պահանջվող ժամանակակից հմտությունները, ինչը հանգեցնում է կրթական մասնագիտացումների և աշխատաշուկայի պահանջարկի միջև անհամապատասխանության:[9]

Բարձրագույն կրթության միջին որակը մնում է ցածր, քանի որ որևէ հայկական համալսարան ներառված չէ աշխարհի առաջատար համալսարանների ցանկում:

Եվ իհարկե, ամենամտահոգիչ խնդիրը՝ Հայաստանի բուհերի շրջանավարտների հմտությունների մակարդակն է: Այս ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է 129-րդ տեղը՝ դասվելով աշխարհի ամենացածր ցուցանիշներ ունեցող երկրների շարքին:

[9] Armenia Public Finance Review, International Bank for Reconstruction and Development/The World Bank

Լեգատում Բարեկեցության ինդեքս, 2023[10]

	Աղբյուրը	2013թ. (տեղը)	2023թ. (տեղը)
Բարձրագույն կրթության տեղը		51	64
Ընգրկվածությունը	ՅՈՒՆԵՍԿՕ	48	68
Ավարտելու ցուցանիշը	ՅՈՒՆԵՍԿՕ	19	28
Բարձրագույն կրթության միջին որակը	QS, TES	77	92
Շրջանավարտների հմտությունների մակարդակը	Համաշխարհային տնտեսական ֆորում	127	129

[10] Legatum Prosperity Index https://docs.prosperity.com/9616/7689/4371/Armenia_2023_Picountryprofile.pdf

Հայաստանում բարձրագույն կրթության զարգացմանը էապես խոչընդոտում է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի ընդունման ձգձգումը: Օրենքի մշակման աշխատանքները սկսվել են դեռևս 2016 թվականին, և դրա մի քանի տարբերակներ ներկայացվել են հանրային քննարկման: 2021 թվականին Ազգային ժողովը ընդունել է օրենքը, սակայն այն Հայաստանի Սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է հակասահմանադրական և վերադարձվել ԿԳՄՍ նախարարություն: Մերժման հիմքը եղել է օրենքի մի դրույթ, համաձայն որի՝ համալսարանների հոգաբարձուների խորհրդում կառավարությունը պետք է ունենար մեկ ձայն ավել՝ համեմատած պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ձայների ընդհանուր թվի հետ: Այս դրույթը հակասում է Սահմանադրությամբ երաշխավորված ակադեմիական ինքնավարության սկզբունքին: 2024 թվականին ներկայացվել է օրենքի նոր նախագիծ, որը 2025թ.-ին ընդունվել է կառավարության կողմից և ներկայումս գտնվում է քննարկման փուլում: Օրենքի ընդունման ուշացման պատճառներից մեկը կառավարության՝ Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի ինստիտուտների մեծ մասը համալսարանների հետ միավորելու և «Ակադեմիական քաղաք» ստեղծելու ծրագիրն է: Ակադեմիական քաղաքում նախատեսվում է կենտրոնացնել Հայաստանի բոլոր պետական համալսարանները:

Ծրագիրը ներառում է վեց համալսարանական կլաստերի ձևավորում՝ դասական, տեխնոլոգիական, մանկավարժական, ռազմական, արվեստի և բժշկական: Հայաստանի բոլոր պետական ԲՈՒՀ-երը պետք է ներառվեն այս վեց կլաստերում և 2030 թվականից սկսած՝ փուլային եղանակով տեղափոխվեն Ակադեմիական քաղաք, որը կկառուցվի Երևանի արվարձանային մասերից մեկում:

Բարձրագույն կրթության կառավարումը

Վերջին տարիներին իրականացված կարևոր փոփոխություններից մեկը ԿԳՄՍ նախարարության 2023 թվականի հուլիսի 12-ի հրամանով Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ստեղծումն էր, ինչը ԿԳՄՍ նախարարության Բարձրագույն կրթության վարչության, Գիտության պետական կոմիտեի և Բարձրագույն որակավորման կոմիտեի միավորման արդյունքն էր:

Կոմիտեի հիմնական նպատակներն են՝

- Հայաստանի Հանրապետության բարձրագույն և ասպիրանտական մասնագիտական կրթության որակավորումների համադրելիության ապահովումը Եվրոպական և այլ օտարերկրյա երկրների որակավորումների հետ, ինչպես նաև դիպլոմների և դրանց հավելվածների ճանաչման գործընթացի կազմակերպումը:
- Միջազգային ուսանողական շարժունության խթանումը:
- Ակադեմիական ազատության և հաստատությունների ինստիտուցիոնալ ինքնավարության զարգացումը և խրախուսումը բարձրագույն կրթության ոլորտում:

Կոմիտեի ֆունկցիաները ներառում են

- Հայաստանի բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) համադրելիության մշտադիտարկումը, վերանայումը և համապատասխանեցումը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) համապարփակ շրջանակի հետ, ինչպես նաև նոր որակավորումների սահմանումը և դրանց ներառումը ՈԱՇ-ում:
- ՈԱՇ-ի ինքնահավաստագրման գործընթացի համակարգումը:

Այս գործառույթները համահունչ են ՀԸԳՀ-ով և դրա ճանապարհային քարտեզով սահմանված միջոցառումներին: Այնուամենայնիվ, չնայած կոմիտեի կանոնադրության մեջ նշվում է, որ այն պետք է խթանի և զարգացնի ակադեմիական ազատությունը և ինստիտուցիոնալ ինքնավարությունը, այդ ուղղությամբ ոչ ՀԸԳՀ-ում, ոչ ճանապարհային քարտեզում, ոչ էլ գործողությունների ծրագրում չեն նշվում կոնկրետ միջոցառումներ կամ ակնկալվող արդյունքներ:

ՀԸԳՀ-ի ճանապարհային քարտեզը հատուկ ուշադրություն է դարձնում բարձրագույն կրթության կառավարման համակարգի բարելավմանը: Փաստաթղթում շեշտվում է համալսարանական ինքնավարության և հաշվետվողականության հավասարակշռված համակարգի ստեղծման կարևորությունը, ինչպես նաև կատարողականի առանցքային ցուցանիշների (ԿԱՑ) մշակումը:

2022 թվականի նոյեմբերի 23-ին ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել են համալսարանների ԿԱՑ-երը: Սակայն նոր «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծում ԿԱՑ-ների հաստատման իրավասությունը վերագրվում է ինչպես Կառավարությանը, այնպես էլ լիազոր մարմնին: Բացի այդ, ERASMUS+ ծրագրի շրջանակում իրականացվում է **KPI4HE** նախագիծը, որի նպատակն է մշակել և ներդնել արդյունքահեն ԿԱՑ-եր: Ստացվում է, որ նախարարության կողմից ԿԱՑ-երի հաստատումից կարճ ժամանակ անց ԿԱՑ-երի մշակման նոր ծրագիր է սկսվում: ՀԸԳՀ ճանապարհային քարտեզով նախատեսվում է, որ մինչև 2025 թվականը պետք է ընդլայնվի համալսարանական ինքնավարությունը և ներդրվեն հաշվետվողականության և ԿԱՑ համակարգեր: Այնուամենայնիվ, առայժմ պարզ չէ, թե ի՞նչ քայլեր են իրականացվել համալսարանական ինքնավարության ընդլայնման և հաշվետվողականության մեխանիզմների ներդրման ուղղությամբ:

V-DEM (Ժողովրդավարությանվարիացիաներ) նախագիծը, որը համակարգվում է Շվեդիայի Գոտենբուրգի համալսարանի կողմից, իրականացնում է լայնածավալ հետազոտություններ ակադեմիական ազատության ցուցիչի (ԱԱՑ) վերաբերյալ: ԱԱՑ-ն ներկայումս ընդգրկում է 179 երկիր ՝ ապահովելով ակադեմիական ազատության վերաբերյալ աշխարհում ամենահամապարփակ տվյալների բազան: Այն հիմնված է ամբողջ աշխարհում գործող 2,329 փորձագետների գնահատականների, ստանդարտացված հարցաթերթիկների և V-Dem նախագծի կողմից կիրառված և հարմարեցված հաստատված վիճակագրական մոդելի վրա:

Ակադեմիական ազատության ցուցիչ

Ակադեմիական ազատության ցուցիչը (ԱԱՑ) գնահատում է ակադեմիական ազատության փաստացի մակարդակը ողջ աշխարհում՝ հիմնվելով հինգ հիմնական ցուցանիշների վրա՝

1. Հետազոտելու և դասավանդելու ազատություն
2. Ակադեմիական փոխանակման և գիտելիքի տարածման ազատություն
3. Ինստիտուցիոնալ ինքնավարություն
4. Կամպուսի բարեվարքություն
5. Ակադեմիական և մշակութային արտահայտման ազատություն

2017 թվականին Հայաստանի ակադեմիական ազատության ցուցիչը 0.67 (մաքսիմալ հնարավոր միավորը՝ 1) է եղել: 2019 թվականին այն բարձրացել է մինչև 0.84: Սակայն 2020 թվականից սկսած՝ ակադեմիական ազատության ցուցանիշը նվազել է և 2024 թվականին հասել է 0.64-ի:

2024 թվականին Հայաստանը ակադեմիական ազատության ցուցիչի բաղադրիչների համար գրանցել է հետևյալ արդյունքները (առավելագույն միավորը՝ 4).

Հայաստանի ակադեմիական ազատության ցուցիչը (0.64 հնարավոր 1-ից) ըստ բաղադրիչների, 2024 թ.

1. Հետազոտելու և դասավանդելու ազատություն 3.02
2. Ակադեմիական փոխանակման և գիտելիքի տարածման ազատություն.2.69
3. Ինստիտուցիոնալ ինքնավարություն.2.45
4. Կամպուսի բարեվարքություն.2.35
5. Ակադեմիական և մշակութային արտահայտման ազատություն.2.72

Ինչպես ցույց են տալիս տվյալները, Հայաստանի ցուցանիշները**կամպուսի բարեվարքության**[11] և **ինստիտուցիոնալ ինքնավարության** ոլորտներում ամենացածրն են հինգ ցուցանիշների շարքում՝ համապատասխանաբար **2.35** և **2.45 միավոր՝** հնարավոր 4 միավորից: Սակայն ինստիտուցիոնալ ինքնավարության ոլորտում Հայաստանում արձանագրվել է որոշակի առաջընթաց: Մասնավորապես՝ **2017 թվականին** ինստիտուցիոնալ ինքնավարության ցուցանիշը կազմել է **2.15**, իսկ **2019 թվականին** այն աճել է մինչև **2.62**: Այս բարելավումը կապված է **2018 թվականի հեղափոխությունից** հետո համալսարաններին տրված մեծ ինքնավարության հետ. բազմաթիվ համալսարանների հոգաբարձուների խորհուրդներում նվազել է բարձրաստիճան պետական պաշտոնյաների թիվը, իսկ մի շարք ԲՈՒՀ-երում խորհուրդների նախագահներ ընտրվել են քաղաքական պաշտոններ չզբաղեցնող մարդիկ:

Այնուամենայնիվ, 2020 թվականից սկսած **Հայաստանի համալսարանների ինստիտուցիոնալ ինքնավարության ցուցանիշը կրկին նվազել է**: Սա պայմանավորված է 2020 թվականի

[11] «Կամպուսի բարեվարքություն» (Campus integrity) եզրույթը V-Dem զեկույցում նշանակում է՝ համալսարանի տարածքում դրսից կանխամտածված ձևով ստեղծված անապահովության կամ վախի մթնոլորտի բացակայություն:

պատերազմից հետո համալսարանների հոգաբարձուների խորհուրդներում բարձրաստիճան պաշտոնյաների թվի աճով: Ներկայումս Հայաստանի համալսարանների մեծամասնության հոգաբարձուների խորհուրդների նախագահները բարձրաստիճան պետական պաշտոնյաներ են:

Բացի այդ, ըստ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրինագծի, որը ներկայացվել է հանրային քննարկման 2024 թվականին, բարձրաստիճան պաշտոնյաները **կրկին կարող են ընդգրկվել համալսարանների հոգաբարձուների խորհուրդներում**: Սակայն կառավարության կողմից 2025թ.-ին հաստատված տարբերակում այդ կետը հանված է, ինչը դրական քայլ է: Այդուհանդերձ, ոչ **կրթության զարգացման պետական ծրագիրը**, ոչ էլ **2021–2026 թվականների կառավարության ծրագիրը** չեն պարունակում որևէ միջոցառում, որը նպատակ ունի ուժեղացնել համալսարանների ինստիտուցիոնալ ինքնավարությունը:



Աղբյուր. https://academic-freedom-index.net/

Գծապատկերը ցույց է տալիս, որ ակադեմիական ազատության ցուցիչի բաղադրիչները համեմատած 2017 թվականի հետ հիմնականում բարելավվել են 2018–2021 թվականների ընթացքում: Սակայն 2021 թվականից հետո գրեթե բոլոր բաղադրիչները արձանագրել են անկում: Հայաստանի ամենացածր գնահատականները վերաբերել են ինստիտուցիոնալ

ինքնավարությանը, մինչդեռ ամենաբարձր գնահատականները՝ դասավանդման և հետազոտության ազատությանը:

2024 թվականին Հայաստանը հիշատակվել է «Scholars at Risk Network»-ի կողմից հրապարակված «Free to Think 2024» ակադեմիական ազատության մշտադիտարկման զեկույցում: Մասնավորապես նշվում է, որ «2023 թվականի սեպտեմբերի 26-ին Հայաստանի հատուկ նշանակության ուժերը («կարմիր բերետավորները») ձերբակալել են Հայաստանի ամերիկյան Համալսարանում (ՀԱՀ) ուսանողության կողմից կազմակերպված Արցախի հայերի աջակցման ակցիային մասնակցող 8 ուսանողների, որոնք իրականացնում էին բողոքի ցույց համալսարանի տարածքում»:[12]

Դասավանդում և ուսումնառություն

Դասավանդման և ուսումնառության կարևորությունը Բոլոնիայի նախարարական գագաթնաժողովների օրակարգում առաջին անգամ ընդգծվել է 2015 թվականի Երևանի հռչակագրում: Հռչակագրում նշվում է. «Ուսումնառության և դասավանդման որակի և արդիականության բարձրացումը ԵԲԿՏ (Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի) հիմնական առաքելությունն է»:[13]

Բոլոնիայի գործընթացի շրջանակում ուսումնառության և դասավանդման թեմային առավել խորը անդրադարձ եղել է 2018 թվականի Փարիզի հռչակագրից սկսած՝ ԵԲԿՏ ողջ տարածքում ուսումնառության և դասավանդման շարունակական կատարելագործման համար կարևորելով նոր և ներառական մոտեցումների մշտական զարգացումը: Փարիզի նախարարական կոմյունիկեում մասնավորապես նշվում է.

«Ժամանակն է նորարարական ուսումնառության և դասավանդման փորձի շուրջ համագործակցությունը ճանաչել որպես ԵԲԿՏ ևս մեկ բնութագրիչ: Այս առումով մենք պարտավորվում ենք մշակել նորարարական և ներառական մոտեցումներ՝ ԵԲԿՏ ամբողջ տարածքում ուսումնառության

[12] Scholars at Risk 2024, https://www.scholarsatrisk.org/download-the-free-to-think-2024-pdf/#fastaction-signup-hustle
[13] Yerevan Communique, Bologna Ministerial Conference 2015, https://ehea.info/media.ehea.info/file/2015_Yerevan/70/7/YerevanCommuniqueFinal_613707.pdf

և դասավանդման շարունակական կատարելագործման նպատակով: Այս գործընթացը կարող է հաջողել միայն այն դեպքում, եթե մենք այն իրականացնենք Եվրոպական բարձրագույն կրթության համայնքի հետ սերտ համագործակցությամբ՝ լիովին հարգելով ակադեմիական ազատությունը և ինստիտուցիոնալ ինքնավարությունը»:[14]

Հետևելով Փարիզի հռչակագրին՝ մի շարք երկրներ ձեռնարկել են քայլեր : Մասնավորապես՝

- 2020 թվականին Գերմանիայի դաշնային կառավարությունը և երկրամասերը (Länder) հիմնադրել են Բարձրագույն կրթության նորարարության հիմնադրամը:
- 2022 թվականին Իռլանդիան վերաստեղծվել է Բարձրագույն կրթության ուսումնառության և դասավանդման կատարելագործման ազգային ֆորումը:
- Շվեդիայի Բարձրագույն կրթության խորհուրդը իրականացնում է տարբեր նախաձեռնություններ, այդ թվում՝ համակարգում է երկու նոր ազգային ծրագրեր, որոնք ուղղված են բարձրագույն կրթության մեթոդաբանության և հեռավար ուսուցման խթանմանը:

Ուսումնառության և դասավանդման նշանակությունը ընդգծված է նաև ՀԸԳՀ ճանապարհային քարտեզում: Փաստաթուղթը նախատեսում է հետևյալ միջոցառումը.

«Ուսումնառության և դասավանդման մեթոդաբանությունների արդիականացում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ներառմամբ, ինչպես նաև ինքնուրույն գիտահետազոտական և ստեղծագործական աշխատանքի ընդլայնում բոլոր մակարդակներում»:

Այս միջոցառման ակնկալվող արդյունքն է.

«Ուսանողների ստեղծագործական և քննադատական մտածողության, վերլուծական մոտեցման, մտավոր ճկունության, խնդիրների լուծման կարողությունների, ինչպես նաև նոր և միջոցորտային

[14] Paris Communique, Bologna Ministerial Conference, 2018
https://ehea.info/media.ehea.info/file/2018_Paris/77/1/EHEAParis2018_Communique_final_952771.pdf

գիտելիքներ արագ ձեռք բերելու հմտությունների զարգացում»:

Նախարարությունը ընդգծել է նաև ուսումնառության և դասավանդման առաջնահերթությունը՝ Հայաստանի «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծում՝ համալսարանների գործառույթների շարքում ներառելով հետևյալը. *"Բարձրագույն կրթության որակի շարունակական բարելավումը, դասավանդման, ուսումնառության արդիական մեթոդների ներդրումը և դրանց բազմազանության ապահովումը..»*[15]*:*

Վերջին տարիներին Հայաստանի համալսարանները սկսել են կարևորություն տալ ուսանողների գիտահետազոտական աշխատանքին և ինտերակտիվ ուսուցման մեթոդների տարածմանը: Սակայն այս պահի դրությամբ չկան համապարփակ ուսումնասիրություններ, որոնց հիման վրա կարելի է գնահատել, թե որքանով են արդիականացվել ուսումնառության և դասավանդման մեթոդները, և ինչ արդյունքներ են դրանք տվել:

2023 թվականին Erasmus+ բարձրագույն կրթության բարեփոխումների ազգային փորձագետների խումբը Հայաստանում իրականացրել է փոքրածավալ ուսումնասիրություն՝ «*Հայաստանի համալսարանների կարողությունների զարգացման կարիքների գնահատումը*» վերնագրով: Հաաստանյան համալսարաններին ուղարկվել է հարցաշար, որին արձագանքել է 19 ուսումնական հաստատություն: Հարցվածներից 47.4%-ը գնահատել է ինտերակտիվ ուսուցման մեթոդների ներդրման մակարդակը որպես միջին, իսկ 36.8%-ը՝ որպես բարձր:

2024 թվականի Բոլոնիայի գործընթացի իրականացման վերաբերյալ զեկույցում նշվում է, որ համալսարաններում ուսումնառության և դասավանդման գործոնը հաճախ թերագնահատվում է: *«Ակադեմիական կարիերայի աճի ճանապարհին դասավանդման որակը համեմատած գիտահետազոտական աշխատանքի հետ հաճախ թերագնահատվում է»*[16]*:*

Վերջին շրջանում Հայաստանում նույնպես ավելի մեծ ուշադրություն է դարձվում հետազոտական գործունեության խթանմանը, քան դասավանդմանը: Չնայած համալսարաններում դասավանդման մեթոդների բարելավման ուղղությամբ որոշ քայլեր են ձեռնարկվում են

[15] «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագիծ. https://www.e-draft.am/projects/7684/about
[16] The European Higher Education Area in 2024 Bologna Process Implementation Report.

վերապատրաստումների ձևով, բայց թե որքանով է այդ ամենը հասնում լսարաններ, պարզ չէ: Հայաստանում չկա դասավանդման որակի բարելավման ռազմավարություն: Այս խնդրին անդրադարձ կա նաև Բոլոնիայի գործընթացի իրականացման 2024 թվականի զեկույցում, որտեղ նշվում է.

«*Եվրոպական բարձրագույն կրթության երկրների միայն կեսն ունի դասավանդման որակը բարելավելու ռազմավարություն: Ուսանողակենտրոն ուսուցումը կարևորվում է, սակայն միշտ չէ, որ այն լավ սահմանված է ազգային քաղաքականություններում*»:[17]

Բարձրագույն կրթության բարեփոխումների համապատասխանեցումը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին

ՀԸԳՀ-ի և դրա ճանապարհային քարտեզի հիմնական նպատակներից մեկը Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների համապատասխանեցումն է ԵԲԿՏին: Սակայն բարձրագույն կրթության ոլորտում դեռևս շարունակվում են պահպանվել մի շարք մարտահրավերներ: Դրանք հիմնականում պայմանավորված են «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի ընդունման գործընթացով:

Թեև Հայաստանի 2021–2026 թվականների կառավարության ծրագրում և կրթության զարգացման պետական ծրագրում արդեն իսկ ներառված են մի շարք համապատասխան միջոցառումներ, դրանց իրականացումը զգալիորեն ուշանում է:

Օրինակ՝ ՀԸԳՀ ճանապարհային քարտեզով նախատեսված էր, որ 2023 թվականին բարձրագույն կրթությունը պետք է անցում կատարի կազմակերպական նոր ձևաչափերի՝ ներառելով ամբողջական կամ մասնակի բեռնվածությամբ ուսումնական ծրագրեր: Սակայն այս միջոցառումը դեռևս կյանքի չի կոչվել: Բայց այն ներառված է Հայաստանի «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի նախագծում:

Հայաստանի որակավորումների համադրելիությունն ԵԲԿՏ-ի երկրների որակավորումների հետ և դրանց ճանաչելիությունն ապահովելու գործողությունն իրականացվել է միայն մասնակի: Թեև

[17] The European Higher Education Area in 2024 Bologna Process Implementation Report.

մշակվել են որակավորումների ոլորտային 21 շրջանակներ, սակայն մեծ մասը դեռևս մշակված չեն: Ըստ կրթության զարգացման պետական ծրագրի վերանայված գործողությունների նախագծի՝ մինչև 2028 թվականը պետք է մշակվի որակավորումների ոլորտային 10 շրջանակ, մինչև 2029 թվականը՝ 25 շրջանակ, իսկ ամբողջ գործընթացը նախատեսվում է ավարտել 2030 թվականին:

Ըստ ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի՝ Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) ինքնահավաստագրման զեկույցը պետք է պատրաստ լիներ 2025 թվականին: Սակայն կրթության զարգացման պետական ծրագրի համաձայն՝ այն պետք է ընդունվեր դեռևս 2023 թվականին: Բայց ոչ 2023 թվականին, ոչ էլ 2025 թվականին զեկույցը մշակված չէ: ԿԳՄՍ նախարարությունը նախատեսում է այդ զեկույցը պատրաստել 2030 թվականին: Այս ուշացումը հակասում է Կրթության զարգացման պետական ծրագրի գործողությունների ծրագրում ներկայացված հիմնավորմանը, ըստ որի՝ «*Բարձրագույն կրթության շարունակական բարեփոխումները և Բոլոնիայի գործընթացի շրջանակում Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունները ՈԱՇ-ի ինքնահավաստագրումը դարձնում են հրատապ անհրաժեշտությունն*»:[18]

Հայաստանի Հանրապետության Որակավորման ազգային շրջանակի (ՈԱՇ) ինքնահավաստագրման զեկույցը կարևոր նշանակություն ունի Եվրոպական Բարձրագույն Կրթության Տարածքի (ԵԲԿՏ) հետ համապատասխանեցումն ապահովելու համար: Այն առանցքային նշանակություն ունի որակավորումների միջսահմանային ճանաչումն ապահովելու, ինչպես նաև ուսանողների, դասախոսների և մասնագետների շարժունությունը խթանելու համար:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի **2025 թվականի փետրվարի 19-ի հրամանով** հաստատվել է **Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստագրման գործընթացը կազմակերպելու մասին ծրագիրը**: Ծրագիրն ամրագրում է բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստագրման գործընթացի կարևորությունը, դրա ակնկալվող արդյունքները և

[18] **«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին օրենքից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 16 մարտի 2023 թվականի N 351-L որոշում, https://www.arlis.am/hy/acts/175541**

իրականացման ժամանակացույցը:

«Եթե ՈԱԾ-ի ինքնահավաստագրման գործընթացը չիրականացվի, ապա Հայաստանի Հանրապետությունը չի կարող լիարժեք մասնակցել ԵՄ կրթական նախաձեռնություններին և ինտեգրման գործընթացներին», նշվում է նախարարի հրամանում:[19]

ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի կրթությանը նվիրված որոշ բաժիններում առողջապահության ոլորտին տրվում է անհամաչափ մեծ ընդգծում՝ առանց հստակ հիմնավորման: Օրինակ՝ ճանապարհային քարտեզի **52-րդ կետում** նշվում է բարձրագույն կրթության համապատասխանեցման և համակարգված բարեփոխումների խթանումը, սակայն ակնկալվող արդյունքը ձևակերպված է հետևյալ կերպ. **«Առողջապահության բնագավառի մարդկային ներուժի համապարփակ ռեեստրի առկայություն: Ռեզիդենտի կրթական գործընթացի համապատասխանեցում միջազգային մոտեցումներին»**:

Անհասկանալի է, թե ինչու՞ է այս միջոցառման ակնկալվող արդյունքը կենտրոնանում բացառապես առողջապահության ոլորտի վրա:

ՀԸԳՀ վերանայված ճանապարհային քարտեզը և կրթության զարգացման պետական ծրագիրը պետք է ներառեն 2024 թվականին Տիրանայում կայացած Բոլոնիայի նախարարական համաժողովի երկու առանցքային առաջնահերթությունները, որոնք Հայաստանի քաղաքական փաստաթղթերում շրջանցված են: Այդ առաջնահերթություններն են՝

1. Համալսարանների հանրային պատասխանատվությունը
2. Հասարակության պատասխանատվությունը բարձրագույն կրթության նկատմամբ

«Բարձրագույն կրթության նկատմամբ հանրային պատասխանատվություն» նշանակում է պարտավորությունների համակցություն, որոնք պետական մարմինները պետք է կատարեն՝ որպես

[19] ԿԳՄՍ Նախարարի հրաման «ՀՀ բարձրագույն կրթությանորակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստագրման
գործընթացը կազմակերպելու ծրագիրը հաստատելու մասին»

կրթության ոլորտի և ընդհանրապես հասարակության նկատմամբ իրենց ընդհանուր պատասխանատվության մաս: ...Բարձրագույն կրթության հանրային պատասխանատվությունը վերաբերում է նաև բարձրագույն կրթության համայնքի պարտավորություններին՝ այն հասարակության նկատմամբ, որի մաս է այն հանդիսանում:[20]

Անհրաժեշտություն կա այս արժեքներն ամբողջությամբ ներառել Հայաստանի կրթական համակարգում:

2023 թվականին հաստատվել են բարձրագույն կրթության սոցիալական չափման նկարագրիչները և ցուցանիշները: Դրանց թվում ընդգրկված բարձրագույն կրթության ներառականության սկզբունքն ունի առանձնահատուկ կարևորություն: Փաստաթղթի շրջանակներում սոցիալական չափումը սահմանում է հետևյալ կերպով. «Բարձրագույն կրթության սոցիալական չափումը գործընթաց է, որն ընդգրկում է հատուկ և միջոլորտային քաղաքականություններ՝ ուղղված բարձրագույն կրթության ներառական միջավայրի ձևավորմանը: Այսպիսի միջավայրում բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվող, սովորող և ավարտող ուսանողների կազմը պետք է համապատասխանի ԵԲԿՏ երկրների հասարակությունների բազմաշերտ սոցիալական կառուցվածքին»:[21]

Կրթության զարգացման պետական ծրագրում ներկայացված միջոցառումները շեշտադրում են հատուկ կրթական կարիքներ ունեցող ուսանողների համար նվազագույն անհրաժեշտ ֆիզիկական միջավայրի ողջամիտ հարմարեցումների անհրաժեշտությունը (օրինակ՝ թեքահարթակներ, սանհանգույցներ, վերելակներ, տեսողության խանգարում ունեցող ուսանողների համար նախատեսված գրականություն և այլն): Ըստ այս միջոցառումների՝ հարմարեցումներ ունեցող համալսարանների բաժինը պետք է կազմի՝ առնվազն 20%՝ 2023 թվականին, առնվազն 25%՝ 2024 թվականին, առնվազն 30%՝ 2026 թվականին և առնվազն 50%՝

[20] Tirana Communique, Bologna Ministerial Meeting 2024, https://ehea2024tirane.al/wp-content/uploads/2024/05/ANNEX-1-EHEA-STATEMENTS-ON-FUNDAMENTAL-VALUES.pdf

[21] Principles, Guidelines and Indicators to Strengthen the Social Dimension of Higher Education in the European Higher Education Area, https://ehea.info/Upload/BFUG_SE_BA_84_WG_SD_Principles_and_Guidelines.pdf

2030 թվականին: Այս թիրախները վկայում են բավականին դանդաղ զարգացման տեմպի մասին:

Սոցիալական չափման վերաբերյալ կրթության զարգացման պետական ծրագրում սահմանված ևս մեկ կարևոր ցուցանիշ վերաբերում է ազգային փոքրամասնություններին.

«Բարձրագույն կրթության համակարգում տարեկան առնվազն յոթ նպատակային տեղ հատկացվում է ազգային փոքրամասնությունների համար»:

Անհրաժեշտ է ուժեղացնել սոցիալական չափման բաղադրիչը ինչպես ՀԸԳՀ ճանապարհային քարտեզում, այնպես էլ կրթության զարգացման պետական ծրագրի գործողություններում:

Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի խնդիրներից մեկն այն է, որ այն մատչելի չէ սոցիալապես անապահով խմբերի համար: Անվճար տեղերի սահմանափակ քանակը, բարձր վարձավճարները և կացության բարձր ծախսերը բացասաբար են ազդում թե՛ կրթության մատչելիության, թե՛ ուսումնառության գործընթացի վրա:

Ըստ Համաշխարհային բանկի 2024 թվականի զեկույցի՝

> «Աղքատ բնակչության շրջանում բարձրագույն կրթությանը հասանելիություն ունի միայն 17.2 տոկոսը»:[22]

Մեկ այլ լուրջ խնդիր է ավագ կուրսերի ուսանողների հաճախելիության ցածր մակարդակը: Ուսանողների մեծ մասը աշխատում է, ինչը հանգեցնում է դասերից հաճախակի բացակայությունների: Այս խնդիրը համապարփակ կերպով չի ուսումնասիրվել, սակայն այն էականորեն ազդում է բարձրագույն կրթության որակի և շրջանավարտների հմտությունների ձևավորման վրա: Դրա իրական ծավալը գնահատելու համար անհրաժեշտ են հետագա ուսումնասիրություններ:

Եզրահանգումներ.

[22] Armenia Public Finance Review, International Bank for Reconstruction and Development/The World Bank, 2024

1. **Թերֆինանսավորում և ներդրումների նվազում.**
   Հայաստանի բարձրագույն կրթության համակարգը բախվում է թերֆինանսավորման լուրջ խնդրի հետ՝ համաշխարհային սանդղակում այս ցուցանիշով զբաղեցնելով 100-րդ տեղը: Պետական կրթաթոշակ է ստանում ուսանողների միայն 16.2%-ը, ինչը վկայում է ֆինանսական աջակցության սահմանափակ լինելու մասին և էապես խոչընդոտում է համակարգի մրցունակությանը և որակին:
2. **Օրենսդրական և կառուցվածքային ուշացումներ**
   «*Բարձրագույն կրթության և գիտության մասին*» օրենքի ընդունման ուշացումը խոչընդոտում է Հայաստանի՝ համաշխարհային ակադեմիական չափանիշներին համապատասխանելու գործընթացին :
3. **Դասավանդման և ուսումնառության որակի անտեսում**
   Չնայած հետազոտությունների և միջազգային հրապարակումների վրա աճող ուշադրությանը՝ դասավանդման որակը դեռևս մնում է ոչ առաջնային: Դասավանդման որակի հանդեպ ինստիտուցիոնալ մոտեցման բացակայությունը հանգեցրել է ակադեմիական գերազանցության հանդեպ ոչ բավարար ուշադրության՝ թե՛պետական, և թե՛ համալսարանական մակարդակներում:
4. **Ակադեմիական ազատության ինդեքսի անկում**
   Հայաստանի ակադեմիական ազատության ինդեքսը կտրուկ նվազել է՝ 0.84-ից (2019 թ.) հասնելով 0.64-ի (2024 թ.), ինչը վկայում է ինստիտուցիոնալ ինքնավարության վատթարացող պայմանների մասին:
5. **Ակադեմիական բարեվարքության վերաբերյալ տվյալների հավաքագրման բացակայություն**
   Թեև ներկայումս իրականացվում են ակադեմիական բարեվարքությանը նվիրված դասընթացներ, սակայն այդ ուղղությամբ տվյալների համակարգված հավաքագրման և վերլուծության մեխանիզմներ չկան, ինչը սահմանափակում է քաղաքականությունների ձևավորումը և վերահսկումը:
6. **Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին (ԵԲԿՏ) ինտեգրման դանդաղում.**
   Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) ինքնահավաստագրման զեկույցի

հետաձգումը մինչև 2030 թվականը, խոչընդոտում է ԵԲԿՏ-ին Հայաստանի լիարժեք ինտեգրմանը, սահմանափակելով միջսահմանային ակադեմիական համագործակցությունը և որակավորումների ճանաչումը:

7. **Սոցիալական ընդգրկման մասնակի առաջընթաց**
   Թեև համալսարանները արձանագրել են որոշակի առաջընթաց ներառականության ուղղությամբ (օրինակ՝ ազգային փոքրամասնությունների համար աջակցություն, ֆիզիկական հարմարեցումներ), բարձրագույն կրթության նկատմամբ հասարակության պատասխանատվության, բուհերի հանրային պատասխանատվության խնդիրները, որոնք ամրագրված են Տիրանայի նախարարական կոմյունիկեում, դեռևս ուշադրության չեն արժանացել Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում: :

ԳԼՈՒԽ 2. ՈՉ ՖՈՐՄԱԼ ԵՎ ԻՆՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությունը Հայաստանի կրթական համակարգի ամենաանտեսված ոլորտներից մեկն է: Հատկանշական է, որ այս ոլորտը բացարձակապես ներառված չէր 2001–2005 թթ Հայաստանի կրթության զարգացման պետական ծրագրում:

Այնուամենայնիվ, որոշ առաջընթաց այս ուղղությամբ արձանագրվել է: 2010 թվականին Կրթության և գիտության նախարարության կառուցվածքում ստեղծվեց Լրացուցիչ և շարունակականկրթության բաժինը, որը 2020 թվականին վերակազմավորվեց՝ դառնալով Երիտասարդության քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչություն: Ներկայումս ԿԳՄՍ նախարարության կազմում գործում է Լրացուցիչ և շարունակական կրթության բաժինը՝ Մասնագիտական կրթության և ուսուցման վարչության կազմում: 2012 թվականին, Կրթության և գիտության նախարարի հրամանով, հաստատվել է Հայաստանի լրացուցիչ և շարունակական կրթության ռազմավարությունը 2013–2017 թվականների համար և դրա գործողությունների ծրագիրը: Ռազմավարության իրականացման ընթացքում՝ 2015 թվականին, կառավարությունը հաստատել է լրացուցիչ կրթության ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման ընթացակարգերը: Սակայն այս կարգերը չեն կիրառվել, քանի որ դրանց իրականացման համար անհրաժեշտ մեխանիզմները բացակայում են:

2017–2021 թվականների ընթացքում ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության ոլորտում էական նախաձեռնություններ չեն եղել: Այս ոլորտին անդրադարձ եղել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021–2026 թվականների ծրագրում և դրա միջոցառումների ցանկում: Սակայն պետք է նշել, որ «ինֆորմալ կրթություն» եզրույթը կառավարության ծրագրում առկա չէ: Սակայն, նույն տարում ընդունված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» (ՀԸԳՀ) ճանապարհային քարտեզում «ոչ ֆորմալ և ինֆորմալ» արտահայտությունը առկա է:

2022 թվականին փոփոխություններ կատարվեցին «Կրթության մասին» ՀՀ օրենքում, որոնցով առաջին անգամ օրենսդրորեն ամրագրվեցին ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության արդյունքների գնահատման և ճանաչման դրույթները: Այս համակարգի կիրառման գործիքներից մեկը պետք է դառնար ազգային ուսուցման ռեեստրի ստեղծումը, որը համարվեց անհրաժեշտ նախապայման:

Ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությանը համակարգված մոտեցում առկա է 2022թ. ընդունված «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրում» և 2023թ. ընդունված գործողությունների ծրագրում: Գործողությունների ծրագրի հիմնավորման մեջ նշվում է.

«Լրացուցիչ և շարունակական կրթության հիմնական խնդիրը ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների ճանաչման մեխանիզմի բացակայությունն է: Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է նախ որակավորման յուրաքանչյուր բնագավառի համար մշակել մասնագիտական հմտությունների և աշխատանքային դերերի վրա հիմնված մասնագետների գնահատման չափանիշներ, ինչպես նաև սահմանել ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների ճանաչման մոտեցումները և մեխանիզմներ»[23]:

Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ոլորտի հիմնական մարտահրավերներից մեկը տերմինաբանական խառնաշփոթն է: Խորհրդային շրջանի և ներկայումս կիրառվող եզրույթները հաճախ օգտագործվում են նույն կամ տարբեր իմաստներով: Այս խառնաշփոթը առկա է նաև կրթության զարգացման պետական ծրագրում նախատեսված գործողություններում: Օրինակ՝ գործողությունների ծրագրի ոչ ֆորմալ կրթությանը նվիրված 1.1.3 ենթաբաժնում,

[23]**«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին օրենքից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 16 մարտի 2023 թվականի N 351-L որոշում, https://www.arlis.am/hy/acts/175541**

արտաուսումնական կրթությունը ներառվել է որպես ոչ ֆորմալ կրթության բաղադրիչ: Բացի այդ, «մեծահասակների կրթություն» եզրույթը, որը ներկայումսմեծ տարածում ունի աշխարհում, շատ հազվադեպ է օգտագործվում: Այս խնդրին անդրադառնալու նպատակով գործողությունների ծրագրում առաջարկվել է համապատասխանեցնել կրթությանը վերաբերող ՀՀ հիմնական օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում կիրառվող ոչ ֆորմալ կրթության տերմինաբանությունը (օրինակ՝ լրացուցիչ և շարունակական կրթություն, ցկյանս ուսումնառություն, և այլն) միջազգային ճանաչում ունեցող սահմանումներին և չափանիշներին: Սակայն այս քայլը մինչ այժմ չի իրագործվել:

Կառավարության 2021–2026 թվականների ծրագրում, կրթության զարգացման պետական ծրագրի գործողությունների ծրագրում և ՀԸԳՀ ճանապարհային քարտեզում սահմանված ժամանակացույցերի միջև առկա են անհամապատասխանություններ: Օրինակ՝ ըստ ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի՝ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման կարգավորող ակտերը պետք է մշակվեին 2024 թվականին, մինչդեռ կրթության զարգացման ծրագրի գործողությունների ծրագրում դրանք նախատեսված էին 2023 թվականին: 2024 թվականի ավարտին այդ կարգավորող ակտերը դեռ պատրաստ չեն:

Մեկ այլ օրինակ՝ կառավարության ծրագրում նախատեսված էր 2026 թվականին իրավական հիմքի ստեղծում՝ ոչ ֆորմալ կրթության վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրման համար, մինչդեռ կրթության զարգացման ծրագիրը նպատակ ուներ այդ քայլն իրականացնել 2023 թվականին: Գործողությունների ծրագրի նոր նախագծով այս միջոցառումը հետաձգվում է՝ մինչև 2026 թվականը: Բացի այդ, կառավարության ծրագիրը նախատեսել էր մինչև 2025 թվականը ոչ ֆորմալ կրթության վերաբերյալ իրականացնել հինգ հանրային իրազեկման արշավ: Սակայն կրթության զարգացման ծրագրի գործողությունների ծրագրով սահմանել էր այլ թիրախներ՝ երկու արշավ՝ 2023-ին, երեք՝ 2024-ին, և հինգ՝ 2026-ին:

Ճանապարհային քարտեզով նախատեսված էին նաև պիլոտային ծրագրեր 2024 թվականի համար, որոնք այս պահի դրությամբ դեռ չեն իրականացվել: Ազգային ուսուցման ռեեստրի ստեղծումը ի սկզբանե նախատեսված էր 2016 թվականին, իսկ կրթության զարգացման ծրագրով այն ծրագրված էր 2023 թվականին: Սակայն գործողությունների ծրագրի նոր նախագծով դրա

ստեղծումը հետաձգվել է մինչև 2028 թվականը: Հատկանշական է, որ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2024 թվականի զեկույցում, որը վերաբերում է կառավարության ծրագրի իրականացմանը, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության մասին որևէ հիշատակում չկա:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ տվյալ ոլորտում նախաձեռնություններն իրականացվում են դանդաղ տեմպերով և շարունակաբար հետաձգվում են: Այս եզրահանգումը հաստատվում է նաև այն փաստով, որ կրթության պետական ծրագրի վերանայված գործողությունների նախագծում ոլորտին վերաբերող հիմնական միջոցառումների իրականացումը տեղափոխվել է 2026–2027 թվականներ:

Բավականին դրական քայլ էր 2022 թվականին «Կրթության մասին» օրենքում կատարված փոփոխությունները, որոնք վերաբերում էին ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությանը: Սակայն առանց հստակ մշակված ընթացակարգերի՝ օրենքի դրույթները չեն կարող արդյունավետ կերպով կիրառվել:

Ըստ Տաղանդի համաշխարհային մրցունակության ինդեքսի (Global Talent Competitiveness Index) 2023 թվականի տվյալների, Հայաստանը «ցկյանս ուսումնառություն» ցուցանիշով 134 երկրների շարքում զբաղեցնում է 98-րդ հորիզոնականը:

Եզրահանգումներ.

1. **Դանդաղ և ֆրագմենտար առաջընթաց:** Հայաստանի ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության ոլորտում արձանագրվել է որոշակի առաջընթաց՝ կառուցվածքային բարեփոխումների (օրինակ՝ վարչական վերակազմավորումներ) և օրենսդրական փոփոխությունների տեսքով: Սակայն փոփոխությունների իրականացումը շարունակ ական փնույթ չի կրում: Կենսական նշանակություն ունեցող նախաձեռնությունները, ինչպիսիք են կարգավորող շրջանակները, ազգային ուսուցման ռեեստրի ստեղծումը և ճանաչման մեխանիզմները, բազմիցս հետաձգվել :
2. **Քաղաքականության անհամապատասխանություն:** Տերմինաբանական հակասությունները (օրինակ՝ «ոչ ֆորմալ կրթություն» արտահայտության

նույնականացումը «արտաուսումնական» կամ «լրացուցիչ կրթության» հետ) և կառավարության տարբեր ծրագրերում (օրինակ՝ ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի և կրթության զարգացման ծրագրի միջև) առկա ժամանակային անհամապատասխանությունները խոչընդոտում են համակարգային զարգացումը: Այս խառնաշփոթը վկայում է Հայաստանի քաղաքականությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու հարցում հստակության բացակայության մասին:

3. **Թույլ կիրարկում**: Չնայած օրենսդրական առաջընթացին, օրինակ՝ 2022 թվականին «Կրթության մասին» օրենքում կատարված փոփոխությունները, իրականացման հստակ ընթացակարգերի և հաշվետվողականության մեխանիզմների բացակայությունը այդ փոփոխությունները դարձնում են հիմնականում անարդյունավետ:
4. **Միջազգային մրցունակության ցածր մակարդակ:** Հայաստանի զբաղեցրած 98-րդ տեղը Տաղանդի համաշխարհային մրցունակության ինդեքսի (2023) «ցկյանս ուսումնառություն» ցուցանիշում վկայում է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման ոչ բավարար վիճակի մասին:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

1. Օրենսդրությանը և քաղաքականությանը վերաբերող գործողություններ

○ Արագացնել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի ընդունումը՝ միջազգային չափանիշներին համապատասխանությունը հնարավոր դարձնելու համար:

○ Իրականացնել ակադեմիական ազատությունը, բարեվարքությունը և ինստիտուցիոնալ ինքնավարությունը ուժեղացնելուն ուղղված օրենսդրական փոփոխություններ:

○ Պետական քաղաքականության մեջ ներառել Տիրանայի նախարարական կոմյունիկեի սկզբունքները՝ պարտադրելով համալսարաններին ներկայացնել ի նպաստ հասարակությանը իրականացվող իրենց ներդրումների վերաբերյալ հաշվետվություն:

2. Ֆինանսավորում և գործընկերություններ
    - Բարձրացնել բարձրագույն կրթության պետական ֆինանսավորումը՝ համաշխարհային վարկանիշը բարելավելու համար:
    - Խրախուսել պետական-մասնավոր գործընկերությունները ենթակառուցվածքների, հետազոտությունների և կրթաթոշակների միջոցով:
3. Համապատասխանեցում
    - Նախատեսել ռեսուրսներ՝ մինչեւ 2027 թվականը Որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստագրումն ավարտելու և այն Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին (ԵԲԿՏ) համահունչ դարձնելու համար:
    - Ստեղծել աշխատանքային խումբ՝ Հայաստանի ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության տերմինաբանությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ՏՀԶԿ-ի շրջանակներին համապատասխանեցնելու համար:
    - Ներդաշնակեցնել ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի, Կրթության զարգացման պետական ծրագրի, Կառավարության ծրագրի գործողությունները, դրանց ակնկալվող արդյունքները և ժամկետները :
4. Վերահսկում և ենթակառուցվածք
    - Առաջնահերթություն տալ ազգային ուսուցման ռեգիստրի ստեղծմանը մինչև 2026 թվականը և ապահովել ոչ ֆորմալ, ինֆորմալ ուսումնառության արդյունքների ճանաչումը:
5. Ներառականություն և իրազեկում
    - Հատկացնել ֆինանսավորում ներառական կրթության ծրագրերի իրականացման համար (օրինակ՝ ազգային փոքրամասնությունների, հաշմանդամություն ունեցող ուսանողների համար):
    - Նախաձեռնել հանրապետական քարոզարշավներ՝ խթանելու ցկյանս ուսումնառության, ոչ ֆորմալ, ինֆորմալ կրթության գաղափարները:

Համալսարաններ

1. Որակ և նորարարություն

- Ստեղծել դասավանդման և ուսումնառության գերազանցության կենտրոններ՝ ծրագրերի մշակման և դասախոսական կազմի վերապատրաստման գործընթացն արդյունավետ իրականացնելու համար:
- Իրականացնել նորարարական դասավանդման և ուսումնառության դրամաշնորհներ, ծրագրեր, մրցույթներ:
- Ներդնել և տարածել դասավանդման, ուսումնառության լավագույն փորձը:

2. Կառավարում և հաշվետվողականություն
   - Հրապարակել տարեկան զեկույցներ՝ սոցիալական արդարության, ներառականության և հանրային ներգրավվածության ոլորտներում ունեցած ներդրումների վերաբերյալ:
   - Ընդունել ողջամիտ հարմարեցումներ ոչ բավարար մակարդակով ներկայացված խմբերի համար (օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց):
3. Համագործակցություն
   - Պետական-մասնավոր համագործակցության շրջանակում հետազոտությունների և ենթակառուցվածքների զարգացման նպատակով հաստատել գործընկերություններ ոլորտի ներկայացուցիչների և դոնորների հետ:
   - Ուսումնական հաստատությունների գործունեությունը համահունչ դարձնել որակավորումների ազգային շրջանակին և միջազգային չափանիշներին:

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ

1. Ճահերի պաշտպանություն և վերահսկում
   - Խթանել ակադեմիական ազատության և բարեվարքության իրավական պաշտպանությունը:
   - Իրականացնել մշտադիտարկում անկախ վերահսկող մարմնի միջոցով բուհական բարեփոխումների նկատմամբ:
2. Աջակցություն և հաշվետվողականություն
   - Աջակցել առաջընթացի վերաբերյալ տարեկան զեկույցների (ՈԱԾ, ֆինանսավորում, ակադեմիական ազատություն) համար տվյալների հավաքագրման և վերլուծության գործընթացին:

- Աջակցել բուհերին ներառական կրթական նախաձեռնությունների միջոցով:

3. Հանրային ներգրավվածություն
   - Ցկյանս ուսումնառության և ոչ ֆորմալ կրթության ծրագրերում ուժեղացնել համայնքային իշխանությունների, տեղական կազմակերպությունների դերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն կրթություն

1. Մշտական թերֆինանսավորում
   - Բարձրագույն կրթության ֆինանսավորման ցուցանիշով Հայաստանը աշխարհում զբաղեցնում է 100-րդ տեղը: Անվճար համակարգում սովորում է ուսանողների միայն 16.2%-ը:
2. Օրենսդրական և կառուցվածքային հապաղումներ.
   - Բարձրագույն կրթության և գիտության մասին օրենքի ընդունումը ուշանում է, իսկ որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստագրումը հետաձգվել է մինչև 2030 թվականը:
   - Դանդաղում են համաշխարհային չափանիշներին համապատասխանեցման և ԵԲԿՏ-ին ինտեգրման գործընթացները:
3. Դասավանդման և ուսումնառության որակի անտեսում
   - Դասավանդման և ուսումնառության գերազանցությունը դուրս է մնացել առաջնահերթությունների շարքից:
   - Դասավանդման և ուսումնառության գործընթացին ինստիտուցիոնալ աջակցությանկարիք կա:
4. Ակադեմիական ազատության անկում
   - Արձանագրվել է ակադեմիական ազատության ինդեքսի էական անկում (0.84 → 0.64, 2019-ից մինչ օրս):
   - Բուհերի ինստիտուցիոնալ ինքնավարությունը ցածր է:
5. Տվյալների բացեր և կիրարկման խափանումներ
   - Ակադեմիական բարվարքության վերաբերյալ տվյալների համակարգված

հավաքագրում չկա:

6. Ոչ բավարար սոցիալական ներառականություն
   - Չնայած որոշ առաջընթացին (օրինակ՝ ազգային փոքրամասնությունների համար նախատեսված աջակցություն), բարձրագույն կրթության հանդեպ հանրային պատասխանատվության ինստիտուցիոնալ ամրագրումը բացակայում է:

Ոչ ֆորմալ/ինֆորմալ կրթություն

1. Դանդաղ և ֆրագմենտար առաջընթաց
   - Բարեփոխումները (օրինակ՝ բաժինների վերակազմավորումը) հետևողական չեն, իսկ կարևոր նախաձեռնությունները (կանոնակարգային շրջանակներ, ուսուցման ռեեստր) ուշանում են:
2. Քաղաքականության անհամապատասխանություն
   - Տերմինաբանական խառնաշփոթ (օրինակ՝ «ոչ ֆորմալ» և «լրացուցիչ կրթություն» հասկացությունների միջև):
   - Կառավարության տարբեր ծրագրերի (օրինակ՝ ՀԸԳՀ և Կրթության զարգացման ծրագիր) ժամանակացույցերի անհամապատասխանություն:
3. Միջազգային մրցունակության ցածր վարկանիշ
   - 2023թ. Տաղանդների գլոբալ ինդեքսով ցկյանս ուսումնառության ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է 98-րդ տեղը:
   - Բացակայում են հմտությունների, արդյունքների ճանաչման գործուն մեխանիզմները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ կրթությանմինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիր https://www.arlis.am/hy/acts/171800
2. **«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին օրենքից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 16 մարտի 2023 թվականի N 351-Լ որոշում, https://www.arlis.am/hy/acts/175541**
3. ՀԸԳՀ-ի Ճանապարհային քարտեզ, 2021

4. ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025թ. փետրվարի 19-ի **N 07-Լ** հրաման՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստագրման գործընթացի կազմակերպման ծրագիրը հաստատելու վերաբերյալ:
5. ՀՀ Կառավարության 2021-2026 թվականների ծրագիրը
6. Հայաստանի սոցիալական վիճակը 2023 թվականին
7. Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին ՀՀ Կառավարության Որոշում https://www.irtek.am/views/act.aspx?aid=59279
8. Armenia Public Finance Review, International Bank for Reconstruction and Development/The World Bank, 2024
9. Global Talent Competitiveness Index, INSEAD, 2024
10. Indicators and Descriptors for the Principles of the Social Dimension in the European Higher Education Area, 2024
11. Paris Communique, Bologna Ministerial Conference, 2018 https://ehea.info/media.ehea.info/file/2018_Paris/77/1/EHEAParis2018_Communique_final_952771.pdf
12.
13. "Principles, Guidelines and Indicators to Strengthen the Social Dimension of Higher Education in the European Higher Education Area" Produced by the BFUG Working Group on Social Dimension, 2024
14. Scholars At Risk, https://www.scholarsatrisk.org/download-the-free-to-think-2024-pdf/#fastaction-signup-hustle, 2024
15. The European Higher Education Area in 2024 Bologna Process Implementation Report. 2024
16. The Human Capital Index 2020. https://documents1.worldbank.org/curated/en/456901600111156873/pdf/The-Human-Capital-Index-2020-Update-Human-Capital-in-the-Time-of-COVID-19.pdf
17. The Legatum Prosperity Index https://index.prosperity.com/about-prosperity/prosperity-index
18. Tirana Communique, Bologna Ministerial Meeting 2024, https://ehea2024tirane.al/wp-content/uploads/2024/05/ANNEX-1-EHEA-STATEMENTS-ON-FUNDAMENTAL-VALUES.pdf
19. Yerevan Communique, Bologna Ministerial Conference 2015, https://ehea.info/media.ehea.info/file/2015_Yerevan/70/7/YerevanCommuniqueFinal_613707.pdf
20.

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԸԳՀ ճանապարհային քարտեզով նախատեսված բարձրագույն կրթությանը և ոչ ֆորմալ, ինֆորմալ կրթությանը վերաբերող միջոցառումներ՝ ժամանակացույց, ակնկալվող արդյունքներ և ընթացիկ վիճակ.

Կապ ՀՅԳՀ-ի հետ	**Նախատեսվող միջոցառումներ**	**Կատարման ժամկետ**	**Ակնկալվող արդյունք**	**Ներկա կարգավիճակ**
Ճանապարհային քարտեզի կետ 53-54	**Անցում բարձրագույն կրթության կազմակերպման նոր ձևերի՝** ամբողջական և մասնակի բեռնվածությամբ: **Ուսումնառության ճկուն մոդուլային կառուցվածքների** և ուսանողի առաջընթացի ապահովման անհատականացված մոդելի մշակում և ներդնում	**2023**	Ուսանողների համար կրթություն ստանալու և աշխատանքը համատեղելու ճկուն հնարավորություն-ների առկայություն	Չի իրականացվել: Ներառված է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծում, որը գտնվում է հանրային քննարկման փուլում:
Ճանապարհային քարտեզի կետ 55	Ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության արդյունքների գնահատում ու ճանաչում՝ ենթաօրենսդրական ակտերի մշակում, փորձարարական ծրագրերի իրականացում	2024	ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության արդյունքների գնահատման ու ճանաչման ենթաօրենսդրակ	Ընթացքում է: Սակայն ենթաօրենսդրական ակտերը դեռևս չեն հաստատվել: Փորձարարական ծրագրեր չեն իրականացվել:

			ան ակտերի ընդունում	
Ճանապարհային քարտեզի կետ 62	Բարձրագույն մասնագիտությունների կրթական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի վերանայում՝ ուղղորդելով դեպի ուսումնառության վերջնարդյունքները:	2021-2024	Բարձրագույն կրթության կրթական ծրագրերի բարելավում, արդիականացում և արդի աշխատաշուկայի փոփոխվող պահանջարկին համապատասխանեցում	Գնահատումը դժվար է, քանի որ իրականացման մակարդակը տարբեր համալսարաններում տարբեր է:
Ճանապարհային քարտեզի կետ 63	**Դասավանդման և ուսումնառության մեթոդաբանության արդիականացում** տեղեկատվական տեխնոլոգիաների ընդգրկվածությամբ, ինչպես նաև բոլոր մակարդակներում ինքնուրույն հետազոտական և ստեղծագործական աշխատանքների ավելացմամբ:	2021-2024	Ուսանողների մոտ ստեղծագործական մտքի, քննադատական մտածողության, վերլուծական մոտեցման, մտավոր ճկունություն, խնդիրների լուծման ունակության, նոր ոլորտները և միջոլորտային կարողություններն	**Գնահատման համար անհրաժեշտեն հետազոտություններ:**

			արագ յուրացնելու հմտությունների ձևավորում	
Ճանապարհային քարտեզի կետ 64. Բարձրագույն կրթության ոլորտում համապատաս-խանեցման և համակարգված բարեփոխումների գործընթացի խթանում հետևյալ գործողությունների միջոցով	1) Բուհերի **ինքնավարության և հաշվետվողականության** հավասարակշռված համակարգի ստեղծում: 2) Բուհերի գործունեության **կատարողական արդյուն-քային ցուցանիշների մշակում**:	2025	Բարձրագույն ուսումնական հաստատություններ ի ինքնավարության ընդլայնում, հաշվետվողական մեխանիզմների և արդյունքային ցուցանիշների ներդրում	Չնայած 2022թ.-ին հաստատվել են կատարողականի որոշ ցուցանիշներ, ներկայումս ERASMUS+ KPI4HE ծրագրի շրջանակում մշակվում են նոր ցուցանիշներ: Հաշվետվողականության մեխանիզմները և կատարողականի հիմնական ցուցանիշները (ԿԱՑ, KPI) դեռ ամբողջությամբ ներդրված չեն: Ինստիտուցիոնալ ինքնավարությունը, որը 2018–2019 թթ. հասել էր 2.64 (4 հնարավորից), վերջին 2–3 տարիներին նվազել է՝ 2024 թվականին կազմելով 2.45: Նմանատիպ

				բացասական միտումներ են արձանագրվում նաև Ակադեմիական ազատության ինդեքսի այլ բաղադրիչների դեպքում:
Ճանապարհային քարտեզի կետ 67-68 Ազգային որակավորումների շրջանակի մշակում՝ **Եվրոպական որակավորումների շրջանակին միացած Տեղեկատվական կենտրոնների եվրոպական ցանցի և Ազգային ակադեմիական ճանաչման տեղեկատվական կենտրոնների (ՏԿԵՑ-ԱԱՃՏԿ)** համայնքի շրջանակներում որակավորումների և մասնագիտացման ճանաչումն ու	**Որակավորումների ազգային շրջանակի ամբողջական ներդնում** 1)Որակավորումների ազգային շրջանակի **ինքնահավաստագրման** գործընթացի իրականացում: 2)Բարձրագույն կրթության մասնագիտական կրթական ծրագրերի համապատասխանելիությունը **որակավորումների ազգային շրջանակին** իրականացնելու նպատակով բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակին համապատասխան որակավորումների	2025	ՀՀ որակավորումների՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների հետ համադրելիության և ճանաչելիության ապահովում,	Նախատեսված 36 ոլորտային որակավորման շրջանակներից մշակվել է միայն 21-ը, իսկ մնացածի իրականացումը առաջարկվում է հետաձգել մինչև 2028–2029 թվականները: Ազգային որակավորման շրջանակի ինքնահավաստագրման զեկույցը պատրաստ կլինի միայն 2030 թվականին: **Պետական**

թափանցիկությունը բարելավելու նպատակով	ոլորտային շրջանակների մշակում: Հայաստանի Հանրապետության **պետական որակավորումների ռեեստրի (էլեկտրոնային ռեեստրի)** ստեղծում և գործարկում:			**որակավորումների էլեկտրոնային ռեեստր** առայժմ **չի ստեղծվել**:

Հավելված 2. Հարցաշար

Հարցերի շրջանակը համապատասխանեցվել է մասնակիցներին:

1. Ընդհանուր առմամբ, որքանո՞վ են Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեությունը ինտեգրված Բոլոնիայի գործընթացի պահանջներին:

2. Ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի համալսարանների ինքնավարության և հաշվետվողականության ներկա վիճակը: Արդյո՞ք կիրառվում են համալսարանների գործունեության գնահատման համար կիրառվող կատարողականի ցուցանիշներ (KPI):
3. Ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի համալսարաններումդասավանդման և ուսումնառության ընդհանուր վիճակը: Որքա՞նով են ուսումնական ծրագրերը հարմարեցված ուսանողների կարիքներին:
4. Ո՞րն է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման ներկայիս վիճակը՝ ներառյալ ենթաօրենսդրական ակտերի մշակման գործընթացը: Ինչպիսի՞ փորձնական ծրագրեր են իրականացվում այս ոլորտում:

5. Ի՞նչ առաջընթաց է գրանցվել բարձրագույն կրթության մասնագիտական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի վերանայման գործում: Որքանո՞վ են այդ նոր ծրագրերը արդյունավետ:
6. Ի՞նչ միջոցառումներ են իրականացվել դասավանդման և ուսումնառության մեթոդաբանությունների արդիականացման, տեղեկատվական տեխնոլոգիաների դերի կարևորման, ինչպես նաև բոլոր մակարդակներում ինքնուրույն հետազոտական և ստեղծագործական աշխատանքի խթանման ուղղությամբ:
7. Օտար լեզուներով ի՞նչ կրթական ծրագրեր են իրականացվում Հայաստանի համալսարաններում:
8. Ե՞րբ է նախատեսվում որակավորումների ազգային շրջանակի վերանայումը: Որքա՞նով է այն համահունչ Եվրոպական որակավորման շրջանակին:
9. Ի՞նչ պատճառներով է որակավորման ոլորտային շրջանակների մշակման գործընթացը մնացել թերի:
10. Ի՞նչ է ենթադրում Ազգային որակավորման շրջանակի ինքնահավաստագրման գործընթացը, և ինչպե՞ս կբացատրեք դրա ուշացումը:
11. Ե՞րբ է նախատեսվում Հայաստանի Հանրապետության որակավորումների պետական ռեեստրի (էլեկտրոնային ռեեստրի) ստեղծումը և գործարկումը: